

Թեան ուսումնասիրական և բարեպաշտական զգացմանց դադարւոյ մը տալու համար կձանուցանեմ որ, Ժամանակէ ի վեր գաւառէս մէկ քանի դաղթականներ եկած Շուշի բերդաքաղաքի մէջ բնակութիւն հաստատած են, որոնք քանի տարի առաջ հասարակաց օգտին գործածելու համար իրենց մէջ 150 ռուբլի հաւաքած էին, և զայն շահեցնել տալով 530 մանէթի դրամադուխ կազմած էին, զոր մօտերս ինքնայորդոր սիրով բերելով ընծայեցին կէսը Վարաբաղու Ազգային Հոգևոր դպրոցին, իսկ միւս կէսը Վանձասարու վանից:

Մեր ազգայիններէն շատերն արդէն լաւ զգացած են, որ արդի դարուն մեր բարոյական փրկութեան և լուսաւորութեան ամուր ապաստանարանք Ակեղեցին և դպրոցներն են. ուստի մերազնեայք որչափ այս երկու կենսաբեր երկնային ծնողաց նիւթական սնունդ մատակարարելու փոյթ տանին, այնչափ ևս իրենք բարոյական և մտաւոր սննդեամբ կզարգանան, երջանիկ քաղաքավարութեամբ և շքեղ պատուով իրենց ազգային գոյութիւնը կպահեն աշխարհիս վրայ: Ուրեմն մեծաց շնորհակալութեանց արժանի են Ջրաբերդցիք, որ իրենց այս երկու վեհավայր տաճարաց պայծառութեան և լուսոյ նիւթ մատուցանելով՝ իրենց ապագայ սերունդը լուսաւորելու իրենք ևս մասնակից գտնուեցան: Արանի թէ սոցա գովելի նուիրատուութիւնն և զգացմունքն արձագանք դտնէր բոլոր Հայկական սրտերի մէջ, ի ձեռն հրատարակութեան պատուական Արարատ ամսագրոյդ:

Ի Շուշի:

Մ. Պլուզեան.

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՈՐՏԵՂ ԵՆ ՄԱՅՐԵԲԸ:

Ամերիկայի մանկավարժական լաւագոյն օրագիրներէից մին ուշադրութեան արժանի դատողութիւններ է անուամ կանանց մասին: Աշխարհիս մէջ ամեն ազգեցութիւններէից ամենահզօր, ամենատեղական և ամենաբարոյական անշուշտ մօր ազգեցութիւնն պիտի համարվի: Արբ չկայ մօր ազգեցութիւն, ուրեմն աշխարհիս մէջ ոչինչ չէ կարօղ նորան փոխարինել: Արտաքին սովորութիւններն կարօղ են մանկավարժից հաղորդվել մանուկին, բայց բարոյականութեան դասերը կարօղ են արմատացած լինել մանուկի մէջ միմիայն մօր ձեռով:

Մտաւորական ընդունակութիւնների մշակութիւնը դեռ ևս բարոյական ոյժ չէ տալիս: Բարոյական ոյժը բնաւորութենից է առաջանում: Մարդի բնաւորութիւնը կազմվում է ոչ թէ զիտնական տեղեկութիւնների միջնորդութեամբ, այլ սէրի, ներշնչութեան և այն կատարելատպերի միջնորդութեամբ, որ մարդս այնչափ փայփայում է և սիրում է: Արեւիսայի բնազդմունքը (ինստինկտներ) սովորութիւններ են դառնում շատ առաջ քան թէ տրամաբանական մտախոհութիւնը կուսուցանէ նորան բարին չարից որոշել: Սովորութիւնները բնաւորութեան հիմքներն են, իսկ լաւ սովորութիւնների զարգացումն մօր առանձնական պարապմունք պիտի լինի: Ուղղակի նորա պարտաւորութիւնն է մանուկներին սէր ազդել դէպ ի վայելուն, դէպ ի գեղեցիկն, դէպ

ի աղնիւն և նոցա հեռացնել ամեն վատ զործից: Միայն նա կարող է արդարեւ այս խնդիրը կատարել:

Ենչի ուրեմն այսչափ յաճախ արհամարհում են մարդիկ այս ազգեցութիւնը:

Անհայք կարող են մատենադիրներ լինել, կանայք կարող են ընտրողութեան իրաւունքներ ունենալ, կանայք կարող են զիտութեան ամեն ճիւղերի աշխատակից լինել: Եւս բոլորը այն թողաւորելի է նոցա մինչև այն ժամանակ, քանի որ նոցա երկխոսներն արտաբայաւած յատկութիւնները չեն ստիպի մեզ հարցնելու, իսկ մայրերն ո՞րտեղ են:

Մենք չենք ցանկանում ամենեւին, առում է յիշված օրագիրը, սահմաններ դնել կնոջը իւր զործունէութեան ասպարէզի մէջ, բայց միայն կ'ցանկայինք, որ կիներ որեւիցէ պարտք կատարելն յանձն առնելով, աշխատէր ամենայն բարեխղճութեամբ այն իւր պարտքը կատարել: Եթէ նա ցանկանում է մասնակցել հրապարակասօսութեան, զրականական փառքին կամ քաղաքականութեան, թե՛ղ ուրեմն *անսահման* (ամուրի) մնայ: Ամուսնութիւն ընդունելով նա երդուում է Աստուծու և հասարակութեան առաջ որ ամենախիստ կերպով պիտի կատարէ ամուսնական կեանքի պարտքեր, որոնցից զլեւաւորն այն է, որ նա իւր տունը յարմարաւոր բնակարան պիտի շինէ, որտեղ նա պիտի օրինակով և զործով սովորեցնէ բարեբարոյ լինել, բնութրութիւնը զսպել և պատրաստ լինել ընկերի օգտին իւր անձն զոհել, այնպիսի բնակարան, որտեղ սէրը և խոհականութիւնը միմեանց փոխադարձ հետեւին և կառավարելին, որտեղ անդադար բնաւորութեան

թեան մշակութիւն կատարվէր, և որտեղ վերջապէս անձնանութրութեան ընտելանալով բարոյականութեան այն նշանաւոր յատկութիւններ ստացվէին, որոնք հասարակական կողմուածքի հիմն են դառնում: Աւելեւից և ապա լաւ մարդ կարող է կոչվել միայն նա, ով սիրում է բարին: Մտաւորական ընդունակութիւնների վաղահաս զարգացումն ուշացնում է և յաճախ արգելում է լաւ սովորութիւններին հաստատման լինելու, և սորանով մարդս շատ անգամ չէ կարողանում այն ընդունակութիւնները զործ դնել որպէս իւր շահաւետ օգնական իւր բոլոր կեանքի ընթացքում:

Ընտանեկան կեանքի մէջ մօր անօրէնութեան տակ գտնվող բոլոր միջոցները մօր համար անշուշտ կրթութեան զործիք պիտի լինին: Աերակուր, զգեստ, առօրեայ անտեսութիւն — բոլորը նորա ձեռքին է: Եթէ մայրը ճիշդ է իւր պարապմունքի մէջ, հոգացող է անտեսութեան մէջ, հաստատամիտ է, երբ զօրծակատարութիւնն է պահանջում, երկխոսները այս ազգեցութիւնը զգալով աննշմարելի կերպով բարեբարոյ են դառնում: Ասկայն այն ինչ մայրը անհոգ է լինում և իւր պարտքով չէ պարապում, երկխոսներն արդէն որբ են դառնում: Առքա մեծանում են անկարգութեան օրինակներով դաստիարակվելով: Բարձր ուսումնի ի հարկէ իւր լաւ կողմերն ունի, բայց մենք մեր կանանց համար առանձին արժանաւորութիւն չենք համարում նոցա ակտային ձգտումն զէպի զբականական փառքը: Եւ հարկէ շատ սիրելի է լրագրի կամ թերթի մի մէջ քանի մի տող յաջողակ սեփհա-

կան ոտանաւորներ տեսնել, որ նուիրված են լինում: Իմ սիրելի երեխային, , բայց եթէ նոյն այն երեխան աղաղակում է օրօրոցի մէջ կամ մրմնջում է անկիւնի մի մէջ իւր մօր անուշադրութեան պատճառով, որը լցնում է լրագիրը իւր շարադրութիւններով, խօստովանում ենք անկեղծօրէն — այս դէպքում առաւել լաւ կ'լինէր, որ այն չափաբերական տողերը բնաւ չլինէին:

Աւրեմն մեր ժամանակի զգալի պակասութիւնը մայրերն են, որոնք բաւական հնարաղիտութիւն և հաստատամտութիւն ունենային իւրանց կոչումն հասկանալու և կատարելու համար և առաւել ևս սէր ունենային կոչման դժուարութիւնները քաղցրացնելու համար:

Ի՞նչ կարող էր ուրեմն այս պակասութիւնը փոխարինել: Հասարակական կարծիքը, որ ձայնակից է լինում բազմաթիւ առարկաներին, մի՞թէ այդ հանգամանքում անձայն կ'մնայ և չի գտնի միջոց մեզ լաւ մայրեր հասցնելու, :

Եւ ահա այսպէս է խօսում իւրանց կանանց մասին ամերիկական մանկավարժական լաւագոյն օրագիրներից մին:

Ս. Ս.

ԼՈՒԿ ՃԵՄԵՐԱՆ (ԵԱԿԴԷՄԻԸ):

Համադան քաղաքի մէջ (Պարսկաստանում) հռչակաւոր Եկաղէմիա կար, որի մէջ առաջին արձանը յետագայ վերնագիր ունէր. « Եկաղէմեանները պիտի մտածեն շատ, դրեն սակաւ և խօսեն կարելուն չափ աւելի սակաւ, : «Աս կոչվումէր Լ. ռիկ Եկաղէմիա, և Պարսկաստանի մէջ ճշմարիտ

ուսումնական մի չկար, որ չցանկար նորանդամ լինել: Պօկտօր Օւէր, գեղեցիկ գրքի մի հեղինակն, իմացաւ որ Լ. ռիկ Եկաղէմիայի մէջ պարապօրդ տեղ կար: Աոյնժամայն նա ծանապարհ է ընկնում և Համադան հասնելուն պէս ներկայանալով այն դահլիճի դրան առաջ, որտեղ հաւաքված էին Եկաղէմեանները, խնդրումէ դռնապահից նախագահին յետագայ նամակը հասցնել. « Պօկտօր Օւէրը խոնարհագոյն խնդրումէ իւրան նշանակել պարապօրդ տեղը Լ. ռիկ Եկաղէմիայի մէջ, : Պռնապահն յանձնարարութիւնը նոյնժամայն կատարեց: Բայց դօկտօրը և նորա նամակը չափազանց ուշ եկան. տեղը արդէն պարապած էր:

Եկաղէմիան շատ ցաւեց այս հանգամանքի մասին: Աս ակամայ ընդունած էր իւր աշխատակիցների թւում արքունական ծաղրախօսը, որի կենդանի և թեթեւ սրախօսութիւնը փողոցի մարդիկներ էր զարմացնում: Եկաղէմիան ստիպված էր մնում բացասել դօկտօր Օւէրին, սիրուն և լի զլեով ուսումնականին, որ քաջապէս գիտէր մտրակահարել դատարկ շատախօսները:

Անախագահը, որին յանձնվեցաւ այս անախօրժ տեղեկութիւնը դօկտօրին յայտնել, չէր վստահանում գրեթէ, և չգիտէր ինչ անէր: Փոքր ինչ մտածելուց յետոյ նա հրամայեց ջուր անել մեծ դաւաթի մի մէջ, բայց այնպէս լաւ լցնել, որ մի աւելցած կաթիլից ջուրը թափվէր: Յետոյ նշան արեց, որ խնդրատու կանդիդատը մտնէ: «Աս մտաւ այն հասարակ և համեստ կերպով, որը գրեթէ միշտ խկական արժանաւորութեան յատկութիւն է: